ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ք. Մարտունի, Շահումյան 2,

Հեռ. ՝ 060-74-34-01

№ 752

23 օգոստոսի 2021 թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՏԵՂԱԿԱԼ ՊԱՐՈՆ Ն. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մանուկյան

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջներից ելնելով, ուղարկվում են Մարտունի համայնքի ղեկավարի կողմից 16.08.2021թ. մինչև 20.08.2021թ. ընկած ժամանակահատվածում ընդունված որոշումները:

Առդիր՝ 7 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Հ. ՏՈՆՈՅԱՆ

կատարող՝
Ռ.Սահակյան
Հեռ. ՝ 060-755-333

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 262-Ա

17 օգոստոսի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 20/3 ՀԱՍՑԵԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 20/3 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող 0,002299 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված ավտոտնակը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5 -րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին, չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների սպասարկման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 18.05.2006 թվականի №731-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Կառավարության 18.05.2006 թվականի №912-Ն որոշման , Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2005 թվականի №2387-Ն որոշման 48-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 20/3 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող 0,002299 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 22,99 քմ մակերեսով կառուցապատ և 22,01 քմ ներքին մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական որպես Մարտունի համայնքի սեփականություն:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության Անշարժ Գույքի Կադաստրի Կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանում կատարելու նշված գույքի պետական գրանցում:

3. Գրավոր առաջարկություն անել ինքնակամ շինությունն իրականացրած անձ Գուրգեն Բեգլարի Մարկոսյանին օրինականացված կառույցը և 0,002299 հա հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով գնելու համար:

4.Մարտունի քաղաքի վարչական տարածքում գտնվող 05-003-0518-ծածկագրով 0,002299 հա հողամասին տրամադրել քաղաք Մարտունի, Մյասնիկյան փողոց թիվ 20/3 հասցեն:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքային տնտեսության բաժնի պետ Հակոբ Մնացականյանի վրա:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Հ. ՏՈՆՈՅԱՆ

17 օգոստոսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 263-Ա

17 օգոստոսի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Մարտունի համայնքի և Արցախի Հանրապետության սոցիալապես անապահով ներքոհիշյալ քաղաքացիներին տրամադրել ֆինանսական օգնություն հետևյալ չափերով.

Հ/Հ	Ազգանուն անուն, հայրանուն	Գումարը
1.	Վարդերես Մուշեղի Առաքելյան	30000
2.	Քրիստինե Մամվելի Մոսեյան	20000
3.	Նունե Ալբերտի Սուքիասյան	20000
	Ընդամենը 70000 (յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ	70000

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Հ. ՏՈՆՈՅԱՆ

17 օգոստոսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 264-Ա 17 օգոստոսի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՐՑԱԽԻ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 16 ՀԱՍՑԵԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարտունի քաղաքի բնակիչ Ռոման Վահանի Ջամալյանի հանգուցյալ կնոջ՝ Մերի Գագիկի Սամվելյանի (մահվան վկայական՝ ԲԱ330399, մահացած՝ 07.12.2020թվականին) դիմումը (մուտք 18 օգոստոս 2020 թվական), նկատի ունենալով, որ Մարտունի քաղաքի Արցախի փողոց 3-րդ նրբանցք 16 հասցեում գտնվող իր սեփականությունը հանդիսացող հողամասի վրա (ժառանգության իրավունքի վկայագրեր՝ 12.07.2021 թվական թիվ 3286, թիվ 3287, թիվ 3288, թիվ 3289) Ռոման Վահանի Ջամալյանի կողմից ինքնակամ կառուցված բնակելի կառուցապատման նշանակության շինությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին, չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների սպասարկման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 18.05.2006 թվականի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի 2-րդ բաժնի «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության 20.01.2021թվականի օրենքում լրացումներ կատարելու մասին պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մարտունի քաղաքի Արցախի փողոց 3-րդ նրբանցք 16 հասցեում իր սեփականությունը հանդիսացող բնակելի կառուցապատման գործառնական

նշանակության հողամասի վրա Ռոման Վահանի Ջամալյանի կողմից ինքնակամ կառուցված 25,74 քմ կառուցապատ և 25,74 քմ ներքին մակերեսով նկուղը, 148,0 քմ կառուցապատ և 114,01 քմ ներքին մակերեսով բնակելի տունը, 7,14քմ կառուցապատ հարթակը, 38,1քմ կառուցապատ և 30,30քմ ներքին մակերեսով հացատունը, 50,0քմ կառուցապատ և 38,25քմ ներքին մակերեսով ավտոտնակը, 7,39քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական որպես Ռոման Վահանի Ջամալյանի (անձնագիր՝ AS 0553083, ծնված՝ 11.10.1979 թվականին ,տրված՝ 18.03.2019 թվականին 043-ի կողմից) , Ռոմելա Ռոմանի Ջամալյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ 025032, ծնված՝ 01.12.2004 թվականին), Մայա Ռոմանի Ջամալյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ 133868, ծնված՝ 02.10.2006 թվականին) և Վահան Ռոմանի Ջամալյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ 003119, ծնված՝ 30.10.2009 թվականին) սեփականությունը:

2.Պարտավորեցնել ինքնակամ կառույցն իրականացրած անձ Ռոման Վահանի Ջամալյանին համայնքապետարանի 900145101144 հաշվի համարին վճարել ինքնակամ շինության օրինականացման արժեքը՝

276,37 x 10,000 x 0,069 = 190700 (մեկ հարյուր իննսուն հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Պարտավորեցնել Ռոման Վահանի Ջամալյանին դիմել Հայաստանի Հանրապետության Անշարժ Գույքի Կադաստրի Կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանում նշված գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքային տնտեսության բաժնի պետ Հակոբ Մնացականյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտանական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Հ. ՏՈՆՈՅԱՆ

17 օգոստոսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 265-Ա

18 օգոստոսի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԹԱՂԱՄԱՍԻ 6-ՐԴ ՇԵՆՔԻ ԹԻՎ 17 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼ ԱՐԱՄ ԳԱԳԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԴՍՏԵՐ ՍՈՖԻ ԱՐԱՄԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 14.02.2019 թվականի թիվ 15 և 28.06.2021 թվականի թիվ 52-Ա որոշումները, նկատի ունենալով, որ Արամ Ավետիսյանը ամբողջությամբ մարել է բնակարանի վարձավճարները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մարտունի քաղաքի Զորավար Անդրանիկի թաղամասի 6-րդ շենքի թիվ 17 բնակարանը անհատույց սեփականություն իրավունքով նվիրել վարձակալ Արամ Գագիկի Ավետիսյանի դստեր՝ Սոֆի Արամի Ավետիսյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սոֆի Արամի Ավետիսյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Հ. ՏՈՆՈՅԱՆ

18 օգոստոսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 266-Ա 20 օգոստոսի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԳԱԳԻԿ ԽԱՉԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ 22.08.2019 ԹՎԱԿԱՆԻ ՏՐՎԱԾ ԹԻՎ 17 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գագիկ Խաչիկի Մանուկյանի դիմումը, և հաշվի առնելով որ Գագիկ Խաչիկի Մանուկյանիը ֆինանսական պատճառով չի կարողացել ավարտին հասցնել շինարարությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշման պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Մարտունի քաղաքի բնակիչ Գագիկ Խաչիկի Մանուկյանի 22.08.2019 թվականի տրված թիվ 17 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել մեկ տարով՝ մինչև 2022 թվականի օգոստոսի 22-ը:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքային տնտեսության բաժնի պետ Հակոբ Մնացականյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Հ. ՏՈՆՈՅԱՆ

20 օգոստոսի 2021 թվական
ք. Մարտունի